ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՍՀՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 60 ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Ե. ԽՈՋԱԲԵԿՅԱՆ

Հոկտեմբերյան հեղափոխությունը և ՍՍՀՄ-ի կազմավորումը ստեղծեցին քաղաքական ու տնտեսական նախադրյալներ երկրի բոլոր ժողովուրդների քաղաքական իրավահավասարության և տնտեսական ու սոցիալական զարգացման համար։ ՍՍՀՄ-ի կազմավորումը լիակատար պայմաններ ապահովեց բոլոր ազգերի ու ժողովուրդների ջանքերի ու ստեղծագործական նախաձեռնության միավորման միջոցով աստիճանաբար համահարթելու առանձին հանրապետությունների տնտեսական ու սոցիալական զարգացման մակարդակների միջև գոյություն ունեցող տարբերությունները, ապահովելու նրանց էկոնոմիկայի դինամիկ զարգացումը։ «Ժողովուրդների համերաշխ ընտանիքում,— ասված է «ՍՍՀՄ կազմավորման 60-րդ տարեդարձի մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ,— դինամիկ կերպով է աճում սովետական բոլոր հանրապետությունների էկոնոմիկան»։

Երկրում ամեն մի հանրապետության դերը վերստին մեծացավ նրանց մասնագիտացման ու տնտեսական ինտեգրացիայի շնորհիվ։ Ազգային ամեն մի հանրապետության էկոնոմիկան դարձավ ՍՍՀՄ էկոնոմիկայի մի առանձին մասը։ Ոչ միայն առանձին ձեռնարկությունների, այլև տնտեսական առանձին ճյուղերի առաջընթացը սկսեց կանխորոշվել յուրաքանչյուր հանրապետության արտաքին տնտեսական փոխադարձ կապերի աստիճանով, ամբողջ երկրի, ինչպես նաև միջազգային մասշտաբով աշխատանքի կազմակերպմանը նրանց ունեցած մասնակցությամբ։ Իսկ թե ամեն մի հանրապետություն ի՞նչ մասնակցություն ունի ՍՍՀՄ և միջազգային մասշտաբով աշխատանքի բաժանմանը, կախված է նրանց էկոնոմիկայի զարգացման մակարդակից և կառուցվածքից։ Ուստի, ժամանակակից արտադրական ինտեգրացիայի պայմաններում սովետական հանրապետություններում հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման կարևորագույն ելակետը աշխատանքի խոր բաժանման և կոոպերացման հիման վրա էկոնոմիկայի և, առաջին հերթին, արդյունաբերության խոր մասնագիտացումն է։

Դրա վառ վկայությունը Սովետական Հայաստանն է, որի բազմաճյուղ էկոնոմիկան ստեղծվել և դինամիկ զարգացում է ապրել մեր երկրի բոլոր ժողովուրդների համատեղ ջանքերով։ Նրա ամեն մի առաջընթացում իրենց լուման են ներդրել երկրի բոլոր ազգերն ու ժողովուրդները։ Հայաստանն իր հերթին մեծ մասնակցություն է ունեցել ամբողջ երկրի և նրա առանձին հանրապետությունների տնտեսական ու մշակութային վերածննդի հետագա զարգացման գործում։

Սովետական Հայաստանը ժառանգեց ծայրահեղ քայքայման հասած տնտեսություն։ Առաջին համաշխարհային պատերազմը, թուրքական վանդալների արշավանքը Արևելյան Հայաստան, ազգամիջյան կռիվները Հայաստանի ժողովրդական տնտեսությունը հասցրել էին ողբերգական վիճակի։ Պատմական կարճ ժամանակամիջոցում Սովետական Հայաստանը ագրարային երկրից դարձավ ինդուստրիալ հզոր հանրապետություն, ստեղծվեց բազմաճյուղ արդյունաբերություն, որն այսօր տալիս է հանրապետության ազգային եկամուտի ճնշող գերակշռությունը, խիստ մասնագիտացվեց գյուղատնտեսությու-

նը, բուռն թափ ստացան շինարարությունը, տրանսպորտը, կապը, տեղի ունեցան արմատական սոցիալական վերափոխումներ. աննախընթաց ծաղկում ապրեցին կրթությունը, գիտությունն ու մշակույթը, առողջապահությունը, կառուցվեցին նորանոր քաղաքներ, արդյունաբերական կենտրոններ, մշակույթի օջախներ, բարեկարգվեցին գյուղերն ու ավանները։

* * *

Վ. Ի. Լենինը, մշակելով Ռուսաստանի սոցիալ-տնտեսական կյանքի արմատական վերափոխումների ծրագիրը, հիմքում դնում էր արդյունաբերության համակողմանի զարգացումը։ Դա բացատրվում է նրանով, որ արդյունաբերությունը նյութական արտադրության առաջատար ճյուղն է։ Այդ դերն արտահայտվում է նրանում, որ արդյունաբերությունը հանդես է գալիս որպես սոցիալիստական ընդլայնված վերարտադրություն, նրա ինտենսիվ զարգացման, գիտատեխնիկական առաջընթացի արագացման նյութական հիմքը։ Լինելով գիտատեխնիկական առաջընթացի հիմնական կրողը, արդյունաբերությունը ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը վերազինում է նոր, առաջնակարգ տեխնիկայով։ Արդյունաբերության զարգացման մակարդակից, տեմպերից ու բնույթից են կախված գյուղատնտեսության, շինարարության, տրանսպորտի, կապի տեխնիկատնտեսական մակարդակը, բնակչության սպասարկման ոլորտի կատարելագործման աստիճանը։ Վերջին հաշվով, ժողովրդական տնտեսության տեխնիկական զինվածության մակարդակը որոշվում է արդյունաբերության կողմից դրանց պահանջմունքները բավարարելու աստիճանով։ Արդյունաբերության զարգացումը երկրի տնտեսական պոտենցիալը զորացնելու, սոցիալիզմի ու կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման խնդիրը լուծելու կարևորագույն նախադրյալ է։ Արդյունաբերության զարգացումը պետք է լուծում տար Ռուսաստանի նախկին ազգային ծայրամասերի տնտեսական հետամնացության վերացման և բոլոր ժողովուրդների համակողմանի զարգացման խնդիրներին։

Եթե Միության մասշտաբով սոցիալիստական ինդուստրացումը նպատակ ուներ ապահովել ծանր արդյունաբերության ճյուղերի արագատեմպ զարգացումը, ապա ըստ առանձին տնտեսական շրջանների սկզբում այդպիսի խնդիր դեռևս չէր դրվում։ Ազգային հանրապետություններում նախ զարգանում էր ճյուղերի սահմանափակ շրջանակ։ Այդ ընթացքում խնդիր էր դրվում արդյունաբերության այս կամ այն ճյուղը ստեղծելիս նկատի առնել նրա տնտեսական նպատակահարմարությունը՝ համընդհանուր պայմաններ ստեղծելով բոլոր ժողովուրդների տնտեսական զարգացման համար։ Բնական է, որ տընտեսական զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող ազգային հանրապետություններում, ուր բացակայում էր բազմաճյուղ արդյունաբերությունը, հիմնական ուշադրությունը նվիրվում էր տեղական հումքի բազայի վրա հիմնված և բնակչության սպառման պահանջները բավարարող արդյունաբերության ստեղծմանը։ Այստեղից էլ առաջին հնգամյա պլանը խնդիր էր դնում առանձնահատուկ ուշադրություն դարձնել «ազգային հետամնաց ծայրամասերի և հետամնաց շրջանների էկոնոմիկայի և կուլտուրայի վերելքի հարցերին, ելնելով նրանց տնտեսական և կուլտուրական հետամնացությունն աստիճանաբար լիկվիդացնելու անհրաժեշտությունից, համապատասխանաբար նախատեսելով նրանց էկոնոմիկայի ու կուլտուրայի զարգացման ավելի արագ տեմպ, ելնելով այդ շրջանների կարիքներն ու պահանջները Միության կարիքների ու պահանջների հետ շաղկապելուց»[1]։

Տնտեսապես ետ մնացած ազգային հանրապետություններում արդյունաբերության ճյուղային կառուցվածքի բարելավումը զուգակցվում էր մասնագիտացման հետ։ Նրանց զգալի մասում արդյունաբերության աճման միջին տարեկան տեմպերը սկսեցին գերազանցել Միության արդյունաբերությանը։ Օրի-

1 ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում. մաս 2-րդ, Երևան, 1956. էջ 586։

նակ, եթե 1928—1940 թթ. ՍՍՀՄ արդյունաբերության զարգացման միջին տարեկան տեմպերը կազմեցին 16, ապա ՀՍՍՀ-ում՝ 19,9 տոկոս։

Այդուհանդերձ, նախապատերազմյան հնգամյակների տարիներին նախկինում տնտեսապես հետամնաց ազգային հանրապետությունները առավելապես զարգանում էին ոչ թե ճյուղային կոմպլեքսների ստեղծման, այլ որոշ ճյուղերի մասնագիտացման ուղղությամբ։ Այդ տարիներին միջինասիական և անդրկովկասյան հանրապետություններում կազմակերպվեցին մետաքսյա, բրդյա և բամբակյա գործվածքեղենի, մահուդի և այլ ֆաբրիկաներ, որոնք տվեցին մետաքսեղենի Միության արտադրության 15,7 տոկոսը։ Անդրկովկասը դարձավ տեքստիլ արդյունաբերության կարևոր կենտրոններից մեկը։ Սընընդի արդյունաբերության ճյուղերում ևս նկատվում էին զգալի տեղաշարժեր։ Կառուցվեցին շաքարի, հրուշակեղենի, մսի կոմբինատներ, պահածոների գործարաններ։ Մասնագիտացված ճյուղերի զարգացումն ուղեկցվեց էներգետիկ տնտեսության ստեղծման ու զարգացման հետ։ Նախապատերազմյան տարիներին տեղական վառելիքի և ջրային ռեսուրսների օգտագործման բազայի վրա հզոր էլեկտրակայանների կառուցումը հնարավորություն տվեց մի շարք հանրապետություններում ստեղծել ու զարգացնել արդյունաբերության էներգատար ճյուղեր, քիմիական արդյունաբերություն, սև և գունավոր մետաղագործություն և այլն։

Ազգային հանրապետություններում արդյունաբերության նման մասնագիտացումը չէր հակասում նրա կոմպլեքսային զարգացման սկզբունքին և հանգեցնում էր ինչպես միջհանրապետական, այնպես էլ ներհանրապետական համամասնությունների կատարելագործմանը։ Դա հնարավորություն տվեց ժամանակի ընթացքում արդյունաբերության մասնագիտացումը զուգակցել նրա տերիտորիալ տեղաբաշխման բարելավման հետ՝ ընդգրկելով հանքային մեծ հարստություն ունեցող շրջաններ։ Դրա շնորհիվ որոշակի փոփոխություն ապրեց նաև արդյունաբերության մեջ աշխատուժի տերիտորիալ տեղաբաշխումը։

Առաջին հնգամյակի տարիներից ի վեր Հայաստանում զարգացում ստացած տեքստիլ, մետաքսի, բամբակազտիչ, կաշվի, գինեգործական, պահածոների և Հայաստանի գյուղատնտեսական հումքի վերամշակման բազայի վրա թեթև ու սննդի արդյունաբերության այլ ճյուղերի հետ միասին հիմնադրվում ու զարգանում էին ծանր արդյունաբերության ճյուղերը։ Ավելին, վերջիններս իրենց աճման տեմպերով գերազանցում էին թեթև արդյունաբերության ճյուղերին, թեև նրանց թողարկած արտադրանքի բացարձակ չափերը անհամեմատ քիչ էին։

Ընդգծելով խոշոր մեքենայական արտադրության կարևորությունը, Վ. Ի. Լենինը նրանում տեսնում էր սոցիալիստական տնտեսության կազմակերպման հիմքը. «...Խոշոր արդյունաբերությունը... արտադրողական ուժերի կացության տեսակետից, այսինքն՝ ամբողջ հանրային զարգացման հիմնական չափանիշի տեսակետից, ներկայացնում է սոցիալիստական տնտեսական կազմակերպության հիմքը, միավորելով առաջավոր արդյունաբերական բանվորներին, միավորելով պրոլետարիատի դիկտատուրան իրականացնող դասակարգին»[2]։

ՍՍՀՄ-ում, ամբողջությամբ վերցրած, և ազգային հանրապետություններում ծանր արդյունաբերության զարգացման լենինյան տեսությունն իր գործնական կիրառումը գտավ ԳՈԷԼՐՈ-ի պլանում։ Վերջինս, ինչպես հայտնի է, նախատեսում էր 10—15 տարում կառուցել սոցիալիզմի նյութատեխնիկական բազան։ Դա առաջին միասնական տնտեսական պլանն էր, որի հիմքում ընկած էր ծանր արդյունաբերության ստեղծումն ու զարգացումը։

Լենինյան այդ դրույթներն իրականացնելու համար հանրապետությունը նախապատերազմյան հնգամյակներին ձեռնարկեց ծանր արդյունաբերության ճյուղերի ստեղծմանն ու դրանց զարգացմանը։ Առանձնապես բարձր տեմպերով աճեցին էլեկտրաէներգիայի արտադրությունը, մեքենաշինության ու մե-

2 Վ. Ի. Լենին. Երկեր. հ. 32, էջ 290։

տաղամշակման, շինանյութերի արդյունաբերության ճյուղերը։ Արդեն 1940 թ., 1913 թ. համեմատությամբ, էլեկտրաէներգիայի արտադրությունն ավելացել էր 77,5, մեքենաշինության ու մետաղամշակման համախառն արտադրանքը՝ 15,4 անգամ, շինանյութերի արդյունաբերությունը՝ 14 անգամ, գունավոր մետաղաձուլությունն ավելացել էր 47 տոկոսով։ Արտադրվող 395,3 մլն կվտ ժամ էլեկտրաէներգիայի շուրջ 83 տոկոսը սպառվում էր արդյունաբերության և շինարարության մեջ։ Սննդի և թեթև արդյունաբերության վերարտադրության տեմպերը թեև զիջում էին ծանր արդյունաբերությանը, բայց և այնպես զգալիորեն բարձր էին։ 1913 թ. համեմատ ՀՍՍՀ թեթև արդյունաբերության արտադրանքը 1940 թ. աճեց 7,9, սննդինը՝ 8 անգամ։ 1913 թ. համեմատ ամբողջ արդյունաբերությունն աճել էր 8,7, իսկ խոշոր արդյունաբերությունը՝ 23 անգամ։

Հայկական ՍՍՀ-ում գրվեցին մեքենաշինության, քիմիական արդյունաբերության նոր և նորագույն ուղղությունների հիմքերը։ Եթե նախապատերազմյան տարիներին մի շարք ազգային հանրապետություններում մեքենաշինության զարգացման և նրա մասնագիտացման ուղղությունները, որոշ իմաստով, թելադրվում էին այդ հանրապետությունների էկոնոմիկայի այլ ճյուղերի զարգացման անմիջական պահանջներով, ապա Հայաստանում մեքենաշինության, մասնավորապես, հաստոցաշինության, հետագայում նաև քիմիական արդյունաբերության զարգացումը թելադրվում էր միութենական պահանջներով։ Օրինակ, նախապատերազմյան տարիներին Ադրբեջանում զարգացավ նավթային մեքենաշինությունը, Ուկրաինայում՝ ծանր և գյուղատնտեսական մեքենաշինությունը, Բելոռուսիայում՝ կարտոֆիլի և վուշահավաք մեքենաների արտադրությունը, Ուզբեկստանում՝ բամբակահավաք մեքենաների արտադրությունը, Վրաստանում և Ադրբեջանում՝ գյուղատնտեսական հատուկ կուլտուրաների (թեյ, բամբակ) վերամշակման մեքենաշինությունը և այլն։ Հայաստանում և մի շարք այլ հանրապետություններում ստեղծվեց մետաղահատ հաստոցների արտադրություն, որը հետագայում իր արտադրանքի բազմազան և ունիկալ տեսակներով առաջնակարգ տեղ գրավեց Միության մասշտաբով աշխատանքի հասարակական բաժանման մեջ։

Նախապատերազմյան տարիներին հանրապետությունը ինդուստրիալ ուղեգծերի վրա փոխադրելու համար կառուցվեցին ու շահագործման հանձնվեցին հարյուրավոր արդյունաբերական ձեռնարկություններ։ Հանդես եկան նոր արդյունաբերական շրջաններ։ Նախապատերազմյան տարիներին արդյունաբերական արտադրության աճը ապահովեց նրա տեսակարար կշռի բարձրացումը հանրապետության գյուղատնտեսության և արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ։ Արդեն 1938 թ. արդյունաբերության և գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեջ խոշոր և մանր արդյունաբերության տեսակարար կշիռը կազմեց 75,8 տոկոս, իսկ 1940 թ.՝ 80,8 տոկոս[3]։

Արդյունաբերության մասշտաբների ընդլայնումը ձեռք բերվեց արտադրության միջոցների հանրային սեփականության տիրապետության, աշխատանքի արտադրողականության բարձրացման և նոր լրացուցիչ աշխատողներ ընդգրկելու շնորհիվ։ 1922 թ. վերջերին ՀՍՍՀ արդյունաբերության մեջ ընդգրկված էին ընդամենը 2245 մարդ, իսկ 1926 թ. մարդահամարի տվյալներով ՀՍՍՀ ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության մեջ աշխատում էր 6057, տնայնագործական-արհեստագործական արդյունաբերության մեջ՝ 8032 մարդ։ 1940 թ. արդյունաբերության մեջ ընդգրկված բանվորների ու ծառայողների (առանց կոլտնտեսային արդյունաբերության) միջին տարեկան թիվը հասավ 43,6 հազարի, որից միայն 30,7 հազարը բանվորներ էին։ Բայց եթե անտեսենք մանր ու օժանդակ բնույթ կրող արդյունաբերական ձեռնարկությունները, ապա 1940 թ. արդյունաբերական արտադրական անձնակազմի միջին տարե-

---

3 Տոկոսը հանված է 1926/27 թթ. անփոփոխ գներով հաշվարկված արդյունաբերության և գյուղատնտեսության համախառն արտադրանքի գումարից (տե՛ս Աշխատանքը Հայաստանում 1923—1927 թթ. վիճակագրական տեղեկատու. Երևան, 1927, էջ 2—3)։

կան թիվը կկազմի 34,6 հազար, որից 23,8 հազարը բանվորներ էին։ Նրանք հիմնականում ընդգրկված էին թեթև արդյունաբերության (40,9 տոկոս), սընընդի (17,5 տոկոս), պղնձի, շինանյութերի (7, 0 տոկոս) և արդյունաբերության այլ ճյուղերում։

Հայաստանի ժողովրդական տնտեսության հետագա վերելքը ընդհատվեց Հայրենական պատերազմի տարիներին։ Մեր երկրի բոլոր ժողովուրդների հետ միասին ծանր օրեր ապրեց նաև Հայաստանը։ Սակայն այդ ահեղ գոտեմարտի տարիներին հանրապետության սահմաններում կառուցվում էին նորանոր գործարաններ ու ֆաբրիկաներ, ընդլայնվում էին հները, կազմակերպվում էր արտադրանքի նորանոր տեսակների արտադրություն՝ ռազմաճակատին զինամթերք, պարեն, հանդերձանք մատակարարելու համար։ Պատերազմի տարիներին հանրապետության սահմաններում շարք մտան ավելի քան 100 մեծ ու փոքր արդյունաբերական ձեռնարկություններ։ Այդ ընթացքում էլեկտրակայանների ընդհանուր հզորությունն աճեց 13,6 հազար կիլովատով, 40 տոկոսով ավելացան հիմնական արտադրական ֆոնդերը։

1941—1945 թթ. թեև արդյունաբերության համախառն արտադրանքը ամբողջությամբ վերցրած պակասեց (օրինակ, 1945 թ. այն կազմեց 1940 թ. 93 տոկոսը), բայց նրա առանձին ճյուղերում, մասնավորապես ծանր ինդուստրիայի երկու ճյուղերում, զգալիորեն ավելացավ։ Այդ ընթացքում կրճատվեցին սընընդի, շինանյութերի և գունավոր մետաղաձուլության բացարձակ չափերը։ 1945 թ. գունավոր մետաղաձուլության ձեռնարկությունները թողարկում էին 1940 թ. համախառն արտադրանքից զգալիորեն պակաս մասը, շինանյութերի արդյունաբերության ձեռնարկությունները՝ 46, սննդի արդյունաբերության ձեռնարկությունները՝ 70 տոկոսը։ Մինչդեռ պատերազմի տարիներին էլեկտրական էներգիայի եղած պաշարների օգտագործման հիման վրա Հայկական ՍՍՀ-ում ստեղծվեցին մեքենաշինության, քիմիական արդյունաբերության մի շարք նոր և նորագույն ուղղություններ։ Հաստոցաշինության՝ իր ժամանակի համար նոր, առաջադիմական տեսակների արտադրություն կազմակերպելու հետ միասին պատերազմի տարիներից ի վեր մեքենաշինության մեջ սկիզբ առավ և աստիճանաբար զարգացավ էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը, որն այսօր իր թողարկած արտադրանքի ծավալով դիջում է միայն ՌՍՖՍՀ-ին և Ուկրաինական ՍՍՀ-ին։ Մեքենաշինության և մետաղամշակման ճյուղերի համախառն արտադրանքն այդ ընթացքում աճեց 70, քիմիական արդյունաբերությանը՝ 20, էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 16 տոկոսով։ Բայց, դրանով հանդերձ, արդյունաբերության համախառն արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ թեթև ինդուստրիայի ճյուղերի բաժինը անհամեմատ մեծ էր։ Եվ դա հասկանալի է, քանի որ ծանր ինդուստրիայի արտադրության ճյուղերը մեծ մասամբ նոր էին ստեղծվում։

Հայկական ՍՍՀ արդյունաբերության զարգացման տարեգրության մեջ խորապես ուրվագծվում է հետպատերազմյան շրջանը, մասնավորապես արդի փուլը։ Այդ ընթացքում առանձին հանրապետությունների տնտեսական զարգացման մակարդակները համահարթելու անհրաժեշտությամբ էին պայմանավորված Հայկական ՍՍՀ արդյունաբերության զարգացման համար կապիտալ ներդրումների ծավալի ավելացումն ու նոր արտադրական կարողությունների գործարկման արագացումը։ Հանքահումքային ռեսուրսների հետագա յուրացումը, այդ բազայի վրա գունավոր մետաղաձուլության ու քիմիական արդյունաբերության զարգացումը թելադրում էին ոչ միայն գործող ձեռնարկությունների ընդլայնումն ու վերակառուցումը, այլև նոր ձեռնարկությունների կառուցումը։ Հանրապետության արդյունաբերության զարգացման բարձր տեմպերի և ուղղությունների ընտրության գործում պակաս կարևոր դեր չի խաղացել աշխատանքային ռեսուրսների, մասնավորապես բարձր որակավորման բանվորական ու ինժեներատեխնիկական կադրերի առկայությունը։ Մինչև օրս հանրապետության բնակչության կազմում աշխատունակ տարիքի բարձր տեսակարար կշիռը, հետևապես դրանց զբաղվածությունն ապահովելու անհրաժեշտությունը պայմանավորեցին մեքենաշինության ու թեթև արդյունաբերության

նոր և նորագույն մի շարք աշխատատար ճյուղերի ստեղծումն ու զարգացումը։ Սովետական Հայաստանի արդյունաբերական զարգացումը պայմանավորված է նաև նրա փոքր տարածքով, օգտահողերի սահմանափակությամբ։ Բնակչության շնչի հաշվով գյուղատնտեսական օգտահողերով Հայաստանը միութենական հանրապետությունների շարքում զբաղեցնում է ամենավերջին տեղը։ ՀՍՍՀ-ում բնակչության մեկ շնչին ընկնում է 0,14 հեկտար վարելահող։ ՌՍՖՍՀ-ում այն կազմում է 0, 90, Ուկրաինայում՝ 0, 67, Մոլդավիայում՝ 0,46 հեկտար։ Հայկական ՍՍՀ-ում բնակչության մեկ շնչին ընկնում է 5,0 և 5,7 անգամ ավելի քիչ գյուղատնտեսական օգտահող և վարելահող, քան միջին հաշվով ՍՍՀՄ-ում։ Այդ պատճառով էլ զբաղվածության խնդրի լուծման գործում մեծ դեր է խաղացել արդյունաբերությունը։

Հայկական ՍՍՀ արդյունաբերության զարգացման կարևորագույն առանձնահատկություններից մեկը նրա ճյուղային կառուցվածքի կատարելագործմամբ ուղեկցվող համախառն արտադրանքի ավելացումն է։ Այսպես, օրինակ, 1980 թ. արդյունաբերության համախառն արտադրանքը 1940 թ. նկատմամբ ավելացավ 45,1 անգամ։ 1970—1980 թթ. արդյունաբերության աճի տեմպերով Հայկական ՍՍՀ-ն Միությունում գրավեց երրորդ տեղը՝ Բելոռուսիայից ու Ադրբեջանից հետո, իսկ տասներորդ հնգամյակում՝ երկրորդ տեղը։ Տասներորդ հնգամյակի տարիներին Սովետական Հայաստանում արդյունաբերական արտադրանքի բացարձակ աճը եռակի գերազանցեց 1961—1965 թթ. մակարդակը։

Հանրապետության արդյունաբերության զարգացումը ուղեկցվում է ճյուղային կառուցվածքի առաջադիմական փոփոխություններով, ճյուղային և տերիտորիալ տեղաբաշխման միակողմանիության զգալի հաղթահարումով, արդյունաբերական ձեռնարկությունների մասնագիտացումով, գիտաարտադրական միավորումների ստեղծումով, որակական ցուցանիշների և աշխատուժի օգտագործման արդյունավետության բարելավումով։ Առանձնապես արագ տեմպերով աճեցին գիտատեխնիկական առաջադիմության գլխավոր ուղղությունների նյութական հիմքը ներկայացնող առաջատար ճյուղերը՝ մեքենաշինությունը, էներգետիկան, քիմիական արդյունաբերությունը։ Այդ ճյուղերի զարգացումը բնութագրվել է ոչ միայն քանակական, այլև որակական աճով, միանգամայն նոր արտադրությունների ստեղծումով։ Հանրապետության մեքենաշինության ու մետաղամշակման արդյունաբերության համախառն արտադրանքը 1965—1980 թթ. ավելացավ 6,8, քիմիական ու նավթաքիմիական արդյունաբերությանը՝ 2,7, էլեկտրաէներգետիկայինը՝ 4,7 անգամ։ Դա վկայում է այն մասին, որ հանրապետության արդյունաբերությունը զարգանում է արդի գիտատեխնիկական առաջընթացի միտումներին համապատասխան։ Հանրապետությունում ստեղծվել է արդյունաբերության այնպիսի ճյուղային կառուցվածք, որը հատուկ է արդյունաբերական տեսակետից զարգացած երկրներին։ Հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունները թողարկում են բազմատեսակ ունիկալ հաստոցներ, քիմիական նյութեր, չափիչ ու կարգավորիչ սարքեր, ռադիոսարքեր, հաշվիչ մեքենաներ, շարժական էլեկտրակայաններ, քվանտային գեներատորներ, տրանսֆորմատորներ, ավտոմեքենաներ, ավտոգողեր, բարձր ճշգրտության գործիքներ, գունավոր և հազվագյուտ մետաղների կոնցենտրատներ, օրգանական քիմիայի բարդ նյութեր սինթեզող սարքեր, թեթև ու սննդի արդյունաբերության արտադրանք։ Սովետական Հայաստանը տալիս է Սովետական Միությունում արտադրվող տրանսֆորմատորների 3,5, մետաղահատ հաստոցների 6,1, դարբնոցամամլիչային սարքավորումների 5,6, ժամացույցների 8,5, սպիտակեղենի 6,1, պահածոների 2,4 տոկոսը[4]։

Նշանակալի է հանրապետության բաժինը մոլիբդենային կոնցենտրատի, պղնձի, ծծմբի կոլչեդանի, կաշվի, կոնյակի, գինիների արտադրության մեջ։ Աշխարհի 80, այդ թվում բոլոր սոցիալիստական և շատ կապիտալիստական

---

4 Տե՛ս «Սովետական Հայաստան». 25 սեպտեմբերի, 1980։

ու զարգացող երկրներ է արտահանվում 180 տեսակի արդյունաբերական արտադրանք[5]։

Հայկական ՍՍՀ արդյունաբերության մեջ խիստ մասնագիտացված են մեքենաշինությունը, գունավոր մետաղաձուլությունը, քիմիական, շինանյութերի ու թեթև արդյունաբերությունը, որոնք հասել են արտադրության բարձր մակարդակի, արտադրանքի բազմաթիվ նորագույն տեսակների գծով ապահովել հանրապետության տեղը միության մասշտաբով հասարակական աշխատանքի բաժանման մեջ և պայմանավորել աշխատողների պրոֆեսիոնալ որակական միանգամայն նոր առաջադիմական կազմ։

Ներկայումս շարունակվում է բարձրանալ մեքենաշինության դերը, նրա թողարկած արտադրանքի տեսակարար կշիռը։ Հանրապետության մեքենաշինության ու մետաղամշակման արդյունաբերությունը հիմնականում բնութագրվում է մեքենաշինությամբ, որին բաժին է ընկնում ամբողջ ճյուղի համախառն արտադրանքի ճնշող գերակշռությունը։ Մեքենաշինության զարգացման մակարդակից է կախված ամբողջ ժողովրդական տնտեսության, այդ թվում՝ արդյունաբերության տեխնիկական զինվածության, նրա ճյուղային կապվածքի կատարելագործման աստիճանը։ Նոր, բարձր արտադրողական մեքենաներն ու մեխանիզմները, սարքավորումները, արտադրության ավտոմատ գծերը և ամբողջական գործարանները ստեղծվում են մեքենաշինության մեջ։ Մեքենաշինության ու մետաղամշակման արտադրանքի տեսակարար կշիռը հանրապետության արդյունաբերության ճյուղային կազմում 1966—1980 թթ. ավելի քան կրկնապատկվեց, 1980 թ. կազմելով 27,9 տոկոս։ Դեռևս 1975 թ. մեքենաշինության ու մետաղամշակման արդյունաբերությունը համախառն արտադրանքի ծավալով գրավում էր երկրորդ տեղը՝ զիջելով սննդի արդյունաբերությանը։ Մինչդեռ 1976 թ. այն անվերադարձ կերպով զբաղեցնում է առաջին հորիզոնականը։ Այդ ճյուղը առաջին տեղն է զբաղեցնում նաև աշխատողների թվով։

Վերջին տասնամյակում զգալի զարգացում ստացան մեքենաշինության առավել հեռանկարային ճյուղերը՝ էլեկտրոնային, ռադիոէլեկտրոնային, սարքաշինական արդյունաբերությունը։ Դրանք թողարկում են գիտատեխնիկական առաջընթացի արդի նվաճումներին համապատասխանող արտադրանքի նորագույն նմուշներ։ Հնորոշն այն է, որ հանրապետության մեքենաշինության մեջ արագ տեմպերով են զարգացել առավել աշխատատար ճյուղերը։ Դա շատ կարևոր է մեծ նշանակություն ունեցող սոցիալական խնդրի՝ բնակչության զբաղվածությունն ապահովելու առումով։ Սոցիալական տեսակետից մեքենաշինության, առանձնապես նրա առաջատար ճյուղերի զարգացման մյուս կարևոր կողմն այն է, որ աշխատողների որակավորման նկատմամբ ներկայացնում է բարձր պահանջ, նպաստում է բանվոր դասակարգի հանրակրթական և պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացմանը։ Հանրապետության մեքենաշինության բազմաթիվ առաջատար ձեռնարկություններ հայտնի են ոչ միայն իրենց բարձրորակ արտադրանքով, այլև աշխատողների բարձր որակական կազմով։

Սովետական Հայաստանի արդյունաբերության կարևորագույն ճյուղերից մեկը էներգետիկան է։ Այն ժողովրդական տնտեսության հիմքն է և կարևոր դեր է խաղում նրա բոլոր ճյուղերի զարգացման, տեխնիկական առաջընթացի ապահովման գործում։ Մինչև 1950 թ. հանրապետությունում էլեկտրաէներգիայի արտադրությունը համապատասխանում էր ամբողջ արդյունաբերության զարգացման տեմպերին, բայց հետագայում, մինչև 1960-ական թթ. կեսերը էլեկտրաէներգիայի արտադրության տեմպերը ետ մնացին արդյունաբերության զարգացման տեմպերից։ Ավելի քան տասը տարի էլեկտրաէներգիայի պակասը ծածկելու համար հանրապետությունը այն ստանում էր դրսից։ 1965 թ. սկսած ապահովվեցին էլեկտրաէներգիայի արտադրության բավականին բարձր տեմպեր, որը կապված էր էներգետիկայի ներճյուղային կառուցվածքի առաջադիմական փոփոխությունների հետ։ Դա նախ արտահայտվեց ջերմաէլեկտրակայանների տեսակարար կշռի խիստ բարձրացմամբ և ապա՝ նոր ենթաճյուղի՝ ատոմային էներգետիկայի ստեղծմամբ։ Էլեկտրաէներգիայի

[5] «Коммунист». 29 ноября 1980.

նկատմամբ ժողովրդական տնտեսության պահանջները բավարարելու նպատակով ջերմաէլեկտրակայաններ կառուցվեցին Երևանում, Հրազդանում, Կիրովականում։ Դրանց կառուցումը թելադրվում էր նաև Սևան—Հրազդան կասկադի հիդրոկայանների աշխատանքը ոռոգման ռեժիմին փոխադրելու անհրաժեշտությամբ։ Այնուհետև կառուցվեց հայկական ատոմային էլեկտրակայանը, որի առաջին հերթը շահագործման հանձնվեց 1976 թ., իսկ երկրորդ հերթը՝ 1979 թ. վերջին։ Դրա շնորհիվ արդեն 1980 թ. Հայաստանում էլեկտրակայանների ընդհանուր հզորությունը կազմեց 3542,8 հազ. կվտ, իսկ արտադրվող էլեկտրաէներգիան՝ 13469 մլն կվտ ժամ։

Եթե 1960 թ. Հայկական ՍՍՀ բոլոր էլեկտրակայանների հզորության 95,4 և արտադրված էլեկտրաէներգիայի 98 տոկոսը բաժին էր ընկնում հիդրոէլեկտրակայաններին, ապա հետագայում դրանց բաժինը խստորեն նվազեց։ 1980 թ. դրանք համապատասխանաբար կազմեցին 26,7 և 11,6 տոկոս։ Ներկայումս էլեկտրաէներգիայի շուրջ 89,0 տոկոսը արտադրվում է ջերմային և ատոմային էլեկտրակայաններում։

Հայաստանի արդյունաբերության ճյուղային կառուցվածքի առաջադիմական փոփոխությունները բնութագրվում են նաև նրա առաջատար ճյուղերից մեկի՝ քիմիական արդյունաբերության զարգացումով. այն ուղեկցվել է ներճյուղային կառուցվածքի անընդհատ կատարելագործմամբ։ Հանրապետության քիմիական և նավթաքիմիական արդյունաբերության արտադրանքը 1940 թ. համեմատությամբ 1980 թ. ավելացավ շուրջ 126 անգամ։ Հայաստանում քիմիական արդյունաբերության զարգացումը մեծ ծավալ ընդունեց հետպատերազմյան տարիներին։ Այդ կարճատև ժամանակաշրջանում արհեստական կաուչուկի, ծծմբաթթվի, կաուստիկ սոդայի արտադրությունն ընդլայնվելու հետ միասին ստեղծվեցին հիմնական քիմիայի մի շարք արտադրաճյուղեր։ Լայնորեն ծավալվեց ավտոդողերի, քիմիական պարարտանյութերի, արհեստական մանրաթելերի, սինթետիկ խեժերի և պլաստմասսաների, քիմիական դեղագործական նյութերի արտադրությունը։ Կազմակերպվել է նաև սինթետիկ օրգանական նյութերի, ացետիլցելյուլոզային, դիցիանամիդի, մելամինի, կրեոլինի, քիմիական ռեակտիվների, սոսնձող արհեստական նյութերի, արհեստական կոլոնդի և այլ նյութերի արտադրություն։ Հանրապետությունում քիմիական արդյունաբերության զարգացումը սերտորեն կապվում է նաև գունավոր մետաղաձուլության հումքի կոմպլեքսային օգտագործման հետ։ Այդուհանդերձ, վերջին քսանամյակի ընթացքում քիմիական արդյունաբերության ամենաարագ զարգացող ճյուղը, որը բնութագրում է դրա նորագույն ուղղությունը, սինթետիկ խեժերի և պլաստմասսաների արտադրությունն է։ Արագ տեմպերով է զարգանում նաև կենցաղային քիմիան։

Դրա հետ մեկտեղ վերջին 10—15 տարիների ընթացքում հանրապետության քիմիական արդյունաբերության զարգացման տեմպերը իջնելու միտում են դրսևորում, որի հետևանքով պակասում է այդ ճյուղի համախառն արտադրանքի տեսակարար կշիռը ամբողջ արդյունաբերության մեջ։ Այսպես, եթե 1965 թ. ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ քիմիական ու նավթաքիմիական արդյունաբերության տեսակարար կշիռը կազմում էր 13,4, ապա 1970 թ. իջավ և կազմեց 12,2, իսկ 1980 թ.՝ 9,0 տոկոս։ Միտումը պայմանավորված է քիմիական արդյունաբերության էներգատարությամբ, ջրային հաշվեկշռի լարվածությամբ և, վերջապես, բնակլիմայական, մասնավորապես էկոլոգիական գործոններով, բնակչության բարձր խտությամբ և այլն։ Աստիճանաբար ձևավորվում է հանրապետության քիմիական արդյունաբերության հետագա զարգացման ուղղությունը՝ հանձինս փոքր քիմիայի, մասնավորապես քիմիական դեղագործական, սպիտակուցային նյութերի, վիտամինների, միկրոբիոլոգիական պատրաստուկների, կենցաղային քիմիայի և այլ արտադրությունների։ Այս ճյուղերն ավելի սերտորեն են կապված հանրապետության քիմիական գիտահետազոտական ինստիտուտների պրոֆիլի հետ։

Հանրապետության գունավոր մետաղաձուլությունը զարգանում է երկու ուղղությամբ՝ հանույթի և վերամշակման։ Ըստ որում հանույթի աճի տեմպերը

զգալիորեն գերազանցում են վերամշակմանը, քանի որ գունավոր մետաղաձուլության հումքի մի մասը, իսկ մոլիբդենի կոնցետրատը՝ ամբողջությամբ վերամշակվում է հանրապետությունից դուրս։ Հայաստանի մետաղագործական արդյունաբերությունը մասնագիտացել է պղնձի, ալյումինի, ցինկի, մոլիբդենի կոնցենտրատի արտադրության մեջ։ Հանրապետությունում գործում են մետաղաձուլության այնպիսի խոշոր ձեռնարկություններ, ինչպիսիք են Զանգեզուրի և Ագարակի պղնձամոլիբդենային, Դափանի լեռնահանքային և Ալավերդու լեռնամոլիբդենային կոմբինատները, «Հայոսկի» արտադրական միավորումը, Քանաքեռի ալյումինի գործարանը և այլ ձեռնարկություններ։

1960-ական թթ. սկսած մեծ աշխատանք է տարվում գունավոր մետաղաձուլության ձեռնարկությունների ընդլայնման և տեխնիկական վերակառուցման ուղղությամբ, յուրացվում է արտադրանքի նոր տեսակների արտադրությունը, ձեռնարկվում են շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներ։ Այս ճյուղի հետագա զարգացումը կընթանա աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, եղած արտադրական կարողությունների օգտագործումը բարելավելու ուղղությամբ։ Գունավոր մետաղաձուլության հետագա զարգացման կարևոր ուղղությունը պետք է դառնա ոչ թե հումքի արդյունահանության մասշտաբների խիստ ընդլայնումը, որը տեղի է ունեցել մինչև օրս, այլ որոշ հումքատեսակների կոմպլեքսային օգտագործման կազմակերպումը, կորուստների վերացումը, ինչպես նաև հազվագյուտ և արժեքավոր ցրված մետաղների բոլոր տեսակների կորզումը։ Դա կհանգեցնի գունավոր մետաղաձուլության արտադրանքի ավելացմանը՝ հումքի արդյունահանման տեմպերի չափավոր ավելացման կամ նույնիսկ նախկին մակարդակը պահպանելու պայմաններում։

Հայկական ՍՍՀ արդյունաբերության զարգացող և հեռանկարային ճյուղերից է շինանյութերի արդյունաբերությունը։ 1980 թ. այստեղ թողարկվում էր 86 անդամ ավելի շատ համախառն արտադրանք, քան 1940 թ.։ 1971—1980 թթ. ճյուղի համախառն արտադրանքն ավելացել է 53,5 տոկոսով։ Նրա համախառն արտադրանքի մեջ բարձրանում է առաջադիմական այնպիսի ենթաճյուղերի բաժինը, ինչպիսիք են ցեմենտը, հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաները, տարատեսակ ծածկանյութերը և այլն։ Հանրապետությունում շինանյութերի արդյունաբերության զարգացումը պայմանավորված է հումքի մեծ պաշարների առկայությամբ և կապիտալ շինարարության մեծ թափով։ Բավական է ասել, որ վերջին 10—15 տարիների ընթացքում շարք մտած շինանյութերի արդյունաբերության բազմաթիվ ձեռնարկություններ համապատասխան շինանյութեր են մատակարարում ոչ միայն հանրապետության, այլև միության ժողովրդական տնտեսությանը։

Որոշակի առաջադիմական տեղաշարժեր են կատարվել նաև հանրապետության թեթև արդյունաբերության ճյուղային կառուցվածքում։ Այն համամիութենական մասնագիտացման աստիճանով զբաղեցնում է երկրորդ տեղը, զիջելով միայն մեքենաշինությանը։

Հայաստանի թեթև արդյունաբերությունը բազմաճյուղ է և ունի ավելի քան հարյուր խոշոր ձեռնարկություններ, որի շնորհիվ 1980 թ. նրա համախառն արտադրանքը 1940 թ. մակարդակը գերազանցեց 26,5 անդամ։ Թեթև արդյունաբերության ճյուղային կառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունները գերազանցապես բացատրվում են վերջնական սպառման արդյունք թողարկող ճյուղերի առավել արագ աճի տեմպերով։ Այսպես, օրինակ, կարի և տրիկոտաժի ձեռնարկությունների համախառն արտադրանքը ավելի արագ տեմպերով է ավելացել, քան բամբակյա գործվածքներինը։ 1960-ական թթ. սկսած լուրջ ուշադրություն է նվիրվել թեթև արդյունաբերության ձեռնարկությունների տեղաբաշխմանը, մասնավորապես նոր ձեռնարկությունները շրջաններում ստեղծելու խնդրին։ Միայն 1970-ական թթ. ընթացքում կառուցվեցին Լենինականի բամբակագործական թելերի, Ալավերդու կարի, Արթիկի տրիկոտաժի ֆաբրիկաները, Մասիսի կաշվե հումքի գործարանը, վերակառուցվեցին և ընդլայնվեցին մի շարք ձեռնարկություններ, հանրապետության բազմաթիվ շրջաններում ստեղծվեցին գործող ձեռնարկությունների բաժանմունքներ։ Թեթև արդյունա-

բերության կարևոր ենթաճյուղերից է գորգագործությունը։ Հայաստանի համար այդ ավանդական արտադրության մասշտաբները անընդհատ ընդլայնվում են։ 1980 թ. հանրապետությունում գործվել է 2,6 մլն քմ գորգ և գորգեղեն, կամ մոտ 20 անգամ ավելի շատ, քան 1960 թ.։ Ընդհանուր առմամբ չնայած թեթև արդյունաբերության բացարձակ աճին, ամբողջ արդյունաբերության մեջ նրա համախառն արտադրանքի տեսակարար կշիռը իջնելու միտում է դրսևորում և 1960—1970-ական թթ. տատանվում է 22—23 տոկոսի շուրջը։

Հայաստանի արդյունաբերության ամենահին ճյուղերից մեկը սննդարդյունաբերությունն է։ Այն ընդգրկում է շուրջ 150 ձեռնարկություն։ Մեծ տեսակարար կշիռ ունեն մսեղենի և կաթնեղենի, գինեգործական, պահածոների և հացի ձեռնարկությունները։ Սննդի արդյունաբերության ճյուղային կառուցվածքում վճռական դեր է պատկանում գինեգործությանը։ Նրա բարձրորակ ու քաղցրահամ գինիները, կոնյակները, համաշխարհային շուկայում մեծ սպառում ունեն։

Արդյունաբերության այս ճյուղը աչքի է ընկնում գյուղատնտեսական հումք վերամշակող պահածոների արտադրությամբ։ 1980 թ. պահածոների արդյունաբերական ձեռնարկությունները թողարկել են 416,1 մլն պայմանական տուփ պահածո, որը 1940 թ. մակարդակը գերազանցում է ավելի քան 24 անգամ։

Հանրապետությունում զգալի աշխատանք է տարվում սննդի արդյունաբերության գործող ձեռնարկություններն ընդլայնելու և վերակառուցելու, դրանց տեղաբաշխումը բարելավելու, արտադրանքի նոր տեսակների արտադրությունը յուրացնելու ուղղությամբ։

Բացի հիշատակվածից Հայաստանի արդյունաբերությունն ունի նաև մի շարք այլ ճյուղեր (անտառային, փայտամշակման և ցելյուլոզային թղթի, ապակու-ճենապակու և այլն), որոնց թողարկած համախառն արտադրանքը, սակայն, փոքր տեսակարար կշիռ է կազմում արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ։ Զարգացած սոցիալիզմի պայմաններում շարունակվել են նաև արդյունաբերության այդ ճյուղերի, մասնավորապես փայտամշակման, ինչպես նաև բյուրեղապակու արտադրության զարգացումն ու կատարելագործումը, ճյուղեր, որոնք կոչված են բավարարելու ժամանակակից կահույքի, բյուրեղապակու և ժողովրդական սպառման այլ ապրանքների նկատմամբ բնակչության ներկայացրած պահանջմունքները։

ՍՍՀՄ կազմավորման 60 տարիների ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է նվիրվել արդյունաբերության համակենտրոնացման ու մասնագիտացման, միջհանրապետական ու ներհանրապետական տեղաբաշխումը բարելավելու հարցերին։ Այդ ուղղությամբ լուրջ դեր խաղացին 1970-ական թթ. ստեղծված արտադրական, այդ թվում՝ գիտաարտադրական միավորումները։ Վերջիններս, հանդիսանալով արդյունաբերական ձեռնարկությունները գիտական հիմնարկների հետ ինտեգրացնելու ձևեր, առավելապես համապատասխանում են գիտատեխնիկական հեղափոխության պայմաններին և նպաստում գիտությունը անմիջական արտադրողական ուժի վերածվելուն։ 1970 թ. Հայկական ՍՍՀ-ում գոյություն ուներ ընդամենը 7 արտադրական միավորում, որոնք ընդգրկում էին 60 արտադրական ձեռնարկություններ և թողարկում արդյունաբերության իրացվող արտադրանքի 10,5 տոկոսը։ 1980 թ. այդ միավորումների թիվը հասավ 77-ի։ Դրանք միավորում էին շուրջ 285 արտադրական ձեռնարկություններ և կենտրոնացնում արդյունաբերական արտադրական անձնակազմի շուրջ 58 տոկոսը։ 1980 թ. արտադրական ու գիտաարտադրական այդ միավորումներին բաժին էր ընկնում իրացվող արտադրանքի ծավալի 53 տոկոսը։

Հայաստանում կուտակված փորձը ցույց է տալիս, որ տնտեսական ու սոցիալական առավել մեծ արդյունավետություն ապահովում են այն արտադրական միավորումները, որոնք իրականացնում են ներֆիրմային կոոպերացում, ներառյալ նաև շրջանների բաժանմունքների կոոպերացումը։ Դա, իր հերթին,

նպաստում է արդյունաբերության տեղաբաշխման բարելավմանը։ Մինչդեռ, մինչև 1960-ական թթ. արդյունաբերությունը հիմնականում կենտրոնացված էր հանրապետության երեք քաղաքներում։ 1960—70-ական թթ., հատկապես տասներորդ հնգամյակի տարիներին, լուրջ միջոցառումներ ձեռնարկվեցին արդյունաբերությունը հանրապետության փոքր քաղաքներում, շրջանային կենտրոններում և խոշոր գյուղերում տեղաբաշխելու ուղղությամբ։ Միայն տասներորդ հնգամյակի տարիներին հանրապետության փոքր քաղաքներում և գյուղական վայրերում արդյունաբերության տարբեր ճյուղերի ավելի քան 70 ձեռնարկություններ ու բաժանմունքներ շահագործման հանձնելու շնորհիվ այդ վայրերի արդյունաբերության համախառն արտադրանքի տեսակարար կշիռը ամբողջ արդյունաբերության մեջ հասավ 36 տոկոսի։ Արդյունաբերական ձեռնարկություններ ունեցող շատ քաղաքներում ամրապնդվել է արտադրության և գյուղատնտեսության միջև գոյություն ունեցող կապը. օրինակ, ձեռնարկություններն օգնում են կոլտնտեսություններին տեխնիկան և գյուղգործիքները նորոգելու հարցում։ Կոլտնտեսություններն էլ իրենց հերթին կարող են աշխատողներ տրամադրել, հատկապես գյուղատնտեսական աշխատանքների սեզոնն ավարտվելուց հետո։

Թեև վերջին 20—25 տարիների ընթացքում հանրապետության փոքր քաղաքների զարգացման համար տրամադրվող կապիտալ ներդրումների չափերի ավելացման շնորհիվ դրանց բնակչությունն ավելացել է շատ ավելի արագ տեմպերով, քան խոշոր քաղաքներում, բայց արդյունաբերությունը և բնակչությունը դարձյալ շարունակում են հիմնականում կենտրոնանալ երեք քաղաքներում՝ Երևանում, Լենինականում, Կիրովականում։ Բավական է նշել, որ 1959—1980 թթ. հանրապետության ավելացող քաղաքային բնակչության շուրջ 47,3 տոկոսը, այսինքն 1 մլն 188 հազար բնակչությունից 561,6 հազարը բաժին է ընկել միայն Երևան քաղաքին։ 1981 թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետության քաղաքային բնակչության 68,5 տոկոսը ապրում էր Երևան, Լենինական և Կիրովական քաղաքներում, ըստ որում 51 տոկոսը՝ Երևանում։ Ահա թե ինչու ՀԿԿ XXVII համագումարը վերստին անդրադարձավ Երևան քաղաքի հետագա աճը դանդաղեցնելու, փոքր քաղաքների և գյուղատնտեսական շրջանների սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու հարցերին։

Տասնմեկերորդ հնգամյակում նույնպես Հայկական ՍՍՀ-ին բնորոշ է աշխատանքային ռեսուրսներով ապահովվածությունը։ Դա այս հնգամյակում հանրապետության տնտեսական, մասնավորապես նրա արդյունաբերական զարգացման նախադրյալներից մեկն է։ Մի կողմից մշակելի հողերն ընդարձակելու խիստ սակավ հնարավորությունները, բնակչության բարձր և անընդհատ ավելացող խտությունը (1990 թ. Հայկական ՍՍՀ-ն կդառնա Միության ամենաբարձր խտությունն ունեցող հանրապետությունը), ջրի և էներգիայի ոչ մեծ պոտենցիալը, մյուս կողմից՝ գիտատեխնիկական առաջադիմության նյութական հիմքը կազմող մի շարք առաջատար ճյուղերի զարգացման բարձր մակարդակը և դրան համապատասխան ինժեներատեխնիկական ու բանվորական կադրերի առկայությունը տասնմեկերորդ հնգամյակում նույնպես թելադրում են որակավորում պահանջող գիտատար, քիչ էներգատար, ոչ ջրատար և քիչ նյութատար ճյուղերի զարգացումը

ՍՄԿԿ XXVI համագումարը խնդիր է դնում Հայաստանի արդյունաբերության մասնագիտացումը այսուհետև խորացնելու, ճյուղային կառուցվածքը կատարելագործելու և տեղաբաշխումը բարելավելու հետ մեկտեղ պահպանել նրա զարգացման համեմատաբար բարձր տեմպերը։ Նախատեսվում է Հայաստանի արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը հնգամյակում մեծացնել 29—32 տոկոսով։ Դա միութենական մյուս հանրապետությունը-

ների համեմատ աճի բարձր ցուցանիշ է (կզիջի միայն Մոլդավիային և Վրաստանին)։

Տասնմեկերորդ հնգամյակում նախատեսվում է արդյունաբերության մեջ աշխատուժի վերաբաշխումն ուղեկցել նրա առաջատար ճյուղերում՝ մեքենաշինության, հատկապես սարքաշինության, էլեկտրոնային և ռադիոէլեկտրոնային արդյունաբերության մեջ և այլ ճյուղերում բարձր որակավորում ունեցող աշխատուժի կենտրոնացմամբ։ Դրա հետ մեկտեղ մեքենաշինության բաժինը արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ 1980 թ. 27,9 տոկոսից կբարձրանա և 1985 թ. կկազմի 35,6 տոկոս։ Մինչդեռ քիմիական արդյունաբերությունը 9,1 տոկոսից կիջնի 7,8 տոկոսի։

Տասնմեկերորդ հնգամյակում նախատեսվում է որոշակիորեն զարգացնել նաև թեթև արդյունաբերության առաջադիմական ճյուղերը։ Մեքենաշինության և թեթև արդյունաբերության համեմատաբար արագ զարգացող ճյուղերի ձեռնարկությունները մեծ պահանջ չեն հարուցում ջրի և էներգիայի նկատմամբ, ինչպես նաև կարող են տեղաբաշխվել ցանկացած վայրում, զբաղեցնում են համեմատաբար քիչ տարածություն, չեն աղտոտում մթնոլորտն ու շրջակա միջավայրը։ Դրանց շատ արտադրություններ հետաքրքրություն են ներկայացնում նաև կանանց աշխատանքի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու տեսակետից, որ չափազանց կարևոր է գյուղական շրջանների և փոքր քաղաքների համար։

Այսպիսով, մեր երկրի բոլոր հանրապետությունների միավորումը լիակատար պայմաններ է ստեղծել համապետական հարցերը լուծելիս հաշվի առնել ամեն մի հանրապետության զարգացման տվյալ փուլին բնորոշ առանձնահատկությունները, ճշտորեն զուգակցել էկոնոմիկայի մասնագիտացումն ու կոոպերացումը, ելնել ամեն մի տնտեսական շրջանի ոչ միայն հանքահումքային, վառելիքաէներգետիկ, հողային ու ջրային պաշարների, այլև աշխատանքային ռեսուրսների բանական օգտագործման անհրաժեշտությունից, բնակչության անմիջական պահանջմունքները բավարարող ճյուղերի զարգացման խնդիրներից։